


ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՎԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԸ COMDEX 2003 ԼԱՍ ՎԵԳԱՍՈՒՄ



2003 թ. նոյեմբերի 17-ից 20-ը ԱՄՆ Լաս Վեգաս քաղաքում տեղի ունեցավ COMDEX 2003 (<http://mktplc.medialiveintl.com>) միջազգային ամենամյա ցուցահանդեսը, որը ամենամեծն է ԱՄՆ-ում կազմակերպվող ցուցահանդեսների մեջ: Այնտեղ մասնակցում էին աշխարհի բազմաթիվ երկրների ներկայացուցիչներ, ցուցադրելով իրեց երկրի կամ առանձին ձեռնարկությունների աշխատանքները կապ-


ված կոմպյուտերային, տեղեկատվական և դիզայներական տեխնոլոգիաների հետ: Ցուցահանդեսին իր մասնակցությունն էր բերել նաև Հայաստանի պատվիրակությունը, ի ցույց բերելու Հայաստանում առկա կոմպյուտերային տեղնոլոգիաների ներկանվաճումները, ապագա սպասելիքներն ու հեռանկարները: Հայաստանի պատվիրակության ցուցադրելիք արտադրանքի մեջ էր ընդգրկված նաև Երևանի Պետական Գեղարվեստի Ակադեմիայի ներկայացրած ծրագրերի փաթեթը, որը իր մեջ ներառում էր Հայաստանի արվեստին, մշակույթին, կրթությանն ու գիտությանը նվիրված 7 տարբեր լազերաին սկավառակներ՝ «Հայերենի ինքնուսույց», «Հայերեն Խօսինք», «Քրիստոնեության ընդունման 1700 ամյակը Հայաստանում», «Հայկական հեքիաթներ», «Հայկական տարազներ», «2000 ձեռնարկություններ», «Հայկական զարդանախշեր»: Այդ սկավառակները նախատեսված են բազմաշերտ հասարակության տարբեր ներկայացուցիչների համար, և կարծես ամբողջացնում են հայաստանյան լեզվակրթական և մշակութային ոլորտը:



1. «Հայերենի Ինքնուսույց» <http://www.iatp.am/eduarmerian/east/>

Ինքնուսույցը ստեղծվել է բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Մամվե Իսկանդարյանի կողմից գրված և մշակված գրքի հիման վրա, իսկ էլեկտրոնային նոր տարբերակի նախագծի ղեկավարն է Երևանի Պետական Գեղարվեստի Ակադեմիայի Համակարգչային գրաֆիկայի, արտմենեջմենթի և գովազդի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Գրիգոր Վահանյանը: Հիպերտեքստային ծրագրի հեղինակն է Վահան Բլեյանը, ինքնուսույցը ստեղծվել է Հայկնետ գիտական կենտրոնում, ՀՀ Կրթության և Գիտության

նախարարության ֆինանսական աջակցությամբ. պայմանագիր համար 9, ստորագրված 1.07.1998:




"Հայերենի Ինքնուսույց"-ը նախատեսված է արևելահայերեն սովորել ցանկացողների համար և առանձնահատուկ օգտակար կարող է լինել նամանավանդ մեր սփյուռքահայ հայրենակիցներին, ովքեր ճակատագրի բերմամբ անհաղորդ են մնացել իրենց մայրենի լեզվին կամ թույլ են տիրապետում հայերենին: Ինքնուսույցը որպես ուսումնական ձեռնարկ կարող է

օգտագործվել սփյուռքի դպրոցներում ու վարժարաններում: Սկավառակը հասցեագրված է բոլոր նրանց, ովքեր ցանկանում են անհամեմատ կարճ ժամանակամիջոցում՝ 2-3 ամսում, տիրապետել հայոց լեզվին: Անգլերեն կամ ռուսերեն իմացող յուրաքանչյուր ոք, ինքնուրույն կամ ուսուցչի օգնությամբ, այդ ձեռնարկով կարող է յուրացնել մոտ 2000 բառ և ձեռք բերել հայերենի իմացության այն մինիմումը, որը նրան հնարավորություն կտա հաղորդակցվել կենցաղային և մշակութային թեմաներով, կարդալ միջին դժվարության տեքստեր բառարանի օգնությամբ, հիմք ստեղծել՝ հետագայում ինքնուրույն կերպով լեզվի իմացությունը կատարելագործելու համար:

Սկավառակը բաղկացած է 34 դասից: Առաջին 9 դասերը բանավոր են: Նկատի են առնվել այն հանգամանքը, որ մարդը նախ խոսել է սովորում, ապա կարդալ ու գրել:

10-12-րդ դասերը նվիրված են տառաճանաչությանը և գրությանը: Այնպես որ, եթե սովորողը արդեն գիտի հայերենի այբուբենը, կարող է սկսել միանգամից 13-րդ



դասից: Դրանից հետո եկող մնացած դասերում, որոնք թեմատիկ ուղղվածություն ունեն և որոնց ուսումնական նյութի ընտրության հիմքը կենդանի, բնական խոսքն է, ավելի են խորացվում սովորողի գիտելիքները, խոսելու, լսածը հասկանալու, կարդալու և գրելու հմտությունը և ընդունակությունները: Վերջում բերվում է գիտելիքների ստուգման 100-բալանոց հարցարան, որով կարելի է պարզել նյութի յուրացման և լեզվի իմացության այդ աստիճանի մակարդակի իմացությունը: Լեզվաքերականական նյութերն ու պատկերներն այնպես են կառուցված, որ սովորողին լայն տեղեկություններ տրվեն Հայաստանի ու հայ

ժողովրդի, մեր երկրի պատմության, մշակույթի, տեսարժան վայրերի, հայերի կենցաղի ու ապրելակերպի վերաբերյալ:

2. «Հայերեն Խօսիմք» <http://www.iatp.am/eduarmenian/west/>

«Հայերեն Խօսիմք» հայերեն լեզվի հիպերտեքստային և թվային լսատեսողական դասերի զիծրագիրը ստեղծվել է Վենետիկի Համալսարանի Հայոց Լեզվի ամբիոնի վարիչ և Պո-Արաքս Մշակութային Ընկերակցության նախագահ պրոֆեսոր Լևոն Զաքյանի և Երևանի



Գեղարվեստի Պետական Ակադեմիայի Համակարգչային գրաֆիկայի, արտմենեջմենթի և գովազդի ամբիոնի վարիչ պրոֆեսոր Գրիգոր Վահանյանի ղեկավարությամբ: Դասերի զիծրագրով արդեն 10 տարի է Վենետիկի Համալսարանի Հայոց Լեզվի ամբիոնի ուսանողները ուսուցանում են արդի արևմտահայերենը: Այն նախատեսված է

ինչպես սկսնակների համար, այնպես էլ մասամբ արևմտահայերենին տիրապետողների համար: Դասերի զիծրագրի գլխավոր բովանդակությունը բաղկացած է հետևյալ թեմատիկ բաժիններից.

Հայերեն տառերը և այբուբենը, դասեր, դասաքարտեզ, քերականություն, բառարան:

Ստեղծված է ղեկավարման վահանակ, որը թույլ է տալիս ուսանողին ինքնուրույն կազմակերպել և պլանավորել ուսուցման պրոցեսը, ընտրել համապատասխան բաժինը, կատարել անցում սկիզբ, որոնք իր ուզած պատկերը, օգտվել բառարանից և դասաքարտեզից տպագրել տեքստը՝ տպիչի միջոցով և այլն:

«Դասեր» բաժինը բաղկացած է երկու մասերից և ընդհանուր թվով ընդգրկում է 66 պատկեր: Ընտրելով այս բաժինը ուսանողը կարող է ցանկացած կամ նախատեսված հերթականությամբ իրացնել դասերը: Բացի դրանից յուրաքանչյուր պատկերից նա կարող է ընտրել համապատասխան դասի քերականությունը, բառարանը և դիտել տեսաֆիլմը: Տրված է հնարավորություն ֆիլմի դիտումը կանգնեցնել ցանկացած հատվածում, վերադառնալ սկիզբ, կատարել անցում ցանկացած մասին, կարգավորել ձայնը: Տեսաֆիլմին կցված է ղեկավարման վահանակ:

«Դասաքարտեզ» բաժինը բաղկացած է երեք ենթամասերից՝ Դասեր, Քերականություն, Բառարան, որոնք էլ իրենց հերթին բաժանված են յուրաքանչյուրը երկու մասի: Ենթաբաժինները ներկայացված են իրենց բովանդակային մասով և ընձեռնում են ընտրելու հնարավորություն ցանկացած պատկեր՝ դասերից, քերականական թեմա կամ բառարան ըստ պատկերների /դասերի/ :

«Քերականություն» բաժինը բաղկացած է երկու մասից: Ղեկավարման վահանակի օգնությամբ կարելի է անցնել հաջորդ և նախորդ թեմային, ինչպես նաև դասաքարտեզին:

Էլեկտրոնային «Բառարան» բաժինը բազմալեզու է /հայերեն-անգլերեն-ֆրանսերեն-իտալերեն, մոտ 900 բառ և բառակապակցություններ/:

Էլեկտրոնային բառարանի բառերի ցանկը կարելի է լրացնել: Հայերեն լեզվի հիպերտեքստային և թվային լատենտոդական դասերիզի ծրագիրը թույլ է տալիս ավելացնել նոր բաժիններ, կցել հանրագիտարանային նյութեր, գրականություն, նոր բառարաններ: Ծրագիրը բաղկացած է երեք CD-ներից:

3. «Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակը» <http://www.iatp.am/1700>



Սա մի յուրահատուկ սկավառակ է նվիրված Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակին: Սկավառակում կհայտնաբերեք ծանոթացնող նյութերի համալիր, որը հեղինակների կարծիքով, արտացոլում է հեռավոր ժամանակների իրադարձությունները: Ներկայացված են. աստվածաշնչյան թեմաներ՝ Հին Հայաստանի տարածքում կատարվածի արտացոլմամբ, ինչպես նաև մինչ օրս պահպանված ճարտարապետական կերպարվեստի և

գրականության հուշարձաններ, ստեղծված դարերի ընթացքում հայ վարպետների կողմից ի փառս Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի: Տրվում է. «Ինչու՞ Հայաստանը», ինչպես նաև այլ հարցերի պատասխաններ և տեղեկություններ:

Նյութը ներկայացվում է տեսա-թեմաներով, ստեղծված ժամանակակից մուլտիմեդիայի տեխնոլոգիաների օգտագործմամբ, ուղեկցված հայերեն և անգլերեն տեքստերով, համալրված է Կոմիտասի անմահ ստեղծագործությունների երաժշտությամբ, Լուսինե Չաքարյանի անգուգական կատարմամբ, Ժակ-Միշել Ժառի տիեզերական մեղեդիներով: Սկավառակում ներկայացվում են՝ պատմական քարտեզներ, լուսանկարչական նյութեր, անկախ Հայաստանի հիմնը և այլն: Սկավառակի օգնությամբ դուք կշրջեք Երևանի փողոցներով, կշրջագայեք եկեղեցիներով, կմասնակցեք ծիսակատարություններին, կհիանաք աստվածաշնչյան Արարատ լեռան տեսարաններով: Այս սկավառակը կարելի է օգտագործել ուսումնական նպատակով, որպես լրացուցիչ տեղեկատվական նյութ:

4. «Հայկական Հեքիաթներ» <http://www.iatp.am/armtales>

Այս սկավառակում մշակութակրթական ծրագիրը ներկայացվում է հայկական հայտնի 27 հեքիաթների միջոցով, որոնք համալրված են ձայնային ուղեկցությամբ: Հեքիաթները ներկայացվում են մեր այսօրվա արդիական արևելահայերենով, արևմտահայերենով ու անգլերեն և տարբերվում են ուսուցողական և խրատական բնույթով ու բովանդակությամբ: Անցումները մի լեզվից մյուսը կազմակերպվում



է ընդամենը նախատեսված կոճակների սեղմումով, որը հնարավորություն է տալիս հաջորդաբար լսել նույն տեքստի արտասանությունը տարբեր լեզուներով:

Սկավառակում ներկայացված են ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի մշտապես թարմ ու ինքնատիպ հեքիաթները, որոնք կարդալոց մշտապես կախարդվում ու զարմանում ես վերջիններիս արդիականությամբ: Թումանյանը իր հեքիաթային գույներով, հյութեղ պատկերներով երեխաներին տեղափոխում է հրաշալիքների աշխարհ, այնտեղ, որտեղ մեծերը հայտնվում են երազներում:

Նախագծի հեղինակն է Անի Խաչատրյանը, իսկ պատկերազարդման աշխատանքները կատարվել են Գյումրու գեղարվեստի կենտրոնի նկարչական բաժնի 14-ից 16 տարեկան երեխաների օգնությամբ:

5. «Հայկական Տարազներ» <http://www.iatp.am/culture/taraz/>



Սկավառակում ներկայացվում են 18-ից 20-րդ դարերի հայկական ազգային տարազները: Առանձին են ցուցադրվում արևմտյան Հայաստանի և արևելյան Հայաստանի ժողովուրդներին հատուկ հանդերձանքը, բաժանված ըստ բնակչության վայրերի (Մուշ, Վան, Տրապիզոն, Գյումրի, Երևան, Սևան, Սյունիք, Եղեգնաձոր, Վաղարշապատ, Կապան և այլն), ինչպես նաև առանձնացվում են կանանց, տղամարդկանց, ֆիդայիներին, երեխաներին, հոգևորականներին, կույսերին հատուկ հագուստները: Տեքստի հետ համատեղ ձայնային ուղեկցությամբ պատմվում է ամեն հանդերձանքի մասին, կրողների նիստ ու կացի, սոցիալական կարգավիճակի, ծագման մասին: Ադ գունազարդ տարազները հնարավորություն են տալիս այսօրվա

քաղաքարթությանը սերտորեն առնչվել և ուսումնասիրել 18-ից 20-րդ դարերի մեր հայրենակիցներին, ավելի խորը ընկալել մեր ազգային արժեքները մշակույթի միջոցով:

Պատկերագարդ տարազները տրամադրվել են հայտնի նկարիչ Ֆլորա Գրիգորյանի կողմից, որը երկար տարիների ուսումնասիրության և վերականգնման արդունքում ստեղծել է այդ հրաշալի տարազների հավաքածուն: Հեղինակն է Երևանի Պետական Գեղարվեստի ակադեմիայի դասախոս, արվեստագիտության թեկնածու Վահե Գասպարյանը: Նախագծի գիտական համակարգողն ու հովանավորն է պրոֆեսոր Գրիգոր Վահանյան:

Ստեղծված գունագարդ և անիմացիոն էֆեկտների շնորհիվ աշխատանքը սկավառակի հետ դառնում է չափազանց հետաքրքիր, ուսուցողական և գրավիչ:

6. «Հայաստանյան 2000 կազմակերպություններն ու ձեռնարկությունները»

<http://www.iatp.am/yafa>



Սկավառակում ամփոփվում են Հայաստանում գործող 2000 կազմակերպությունների ու ձեռնարկությունների շտեմարան, որտեղ գործում է որոնման համակարգ, որն էլ հեշտացնում է հետաքրքրող կազմակերպության կամ ձեռնարկության որոնումը:


Որոնումը կարելի է կատարել ըստ ձեռնարկությունների գործունեության ոլորտի կամ ուղակի ըստ անվանման, ձեռնարկության,

հեռախոսահամարի, էլեկտրոնային փոստի հասցեի, տնօրենի անուն-ազգանվան և այլն: Բացի այդ որոնումը կազմակերպվում է նաև դասակարգչի միջոցով : Դասակարգչում կարելի է կատարել բանալիային բառերի որոնում:

Ծրագիրը թույլ է տալիս փոփոխություններ կատարել շտեմարանի տվյալների մեջ:

Բերվող ինֆորմացիան ամբողջական է և բավարար այս կամ այլ ձեռնարկության գործունեության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար: Ծրագիրը գործում է հայերեն, ռուսերեն, անգլերեն և գերմաներեն լեզուներով:

Ծրագրի հեղինակներն են Արթուր Խանդկարյանը, Վահան Բլեյանը, նախագծի համակարգողն է պրոֆեսոր Գրիգոր Վահանյանը:



7. «Հայկական զարդանախշեր» <http://www.iatp.am/ara/sites/ornaments/>

Չարդանախշերը միշտ էլ ըստ արժանվույն են գնահատվել հայ ժողովրդի կողմից: Հայկական արվեստում միշտ առկա են եղել բազմաթիվ ու բազմապիսի զարդանախշեր: Նրանք իրենց կիրառությունն են գտել գրեթե բոլոր բնագավառներում, սկսած հագուստեղենի կամ սպասքեղենի ձևավորումից մինչև շենքերի քանդակազարդումը կամ փայտագործ հատակների մոդելավորումը: Հայկական



զարդանախշերը առանձնանում են իրենց գունային երանգավորման համաչափությամբ, պայծառությամբ և համատեղելիությամբ: Նրանց բազմազանության մեջ գրեթե չեն հանդիպում կրկնություններ, իսկ զարդանախշի կրկնման դեպքում էլ այնքան են տարբերվում իրենց գունավորմամբ, որ առաջին հայացքից դրանք մինգամայն տարբեր են թվում: Հայկական զարդանախշերը համարվում են հայ ժողովրդի արվեստի դրսևորման հիմնային տարրերը և գեղեցկացնում ու շուշ են տալիս ցանկացած ստեղծագործության ինչպես ծաղիկներն են գեղեցկացնում բնությունը:

Ավելի քան 150 զարդանախշերը ներկայացվում են սկավառակի վրա, որպես web կայք, որը բաղկացած է երեք հիմնական բաժիններից, որտեղ ներկայացվում են զարդանախշերը գունավոր, սև-սպիտակ և մոդերն ոճով: Չարդանախշային արվեստը մոդերն ոճի ձևավորման նախշերի բաժնում բաժանված է՝ "մարդ և կին", "կենդանիներ", "տարածություն" թեմաների: Բացի այդ պատրաստված է անհմացիոն տարբերակ, որտեղ կարելի է զարդանախշերը դիտել երկչափ և եռաչափ շարժական օբյեկտների կերպով: Կանաչ ծրագիր, որը համակրգչի հանգստի ռեժիմում անհմացիոն տարբերակով սկսում է ցուցադրել տարբեր զարդանախշեր:



Ծրագրի հեղինակներն են պրոֆեսոր Գ. Վահանյանը և Վ. Վահանյանը: